Ալեքսանդր Շիրվանզադե

Թադեոսն ու Մատթեոսը

Հարազատ եղբայրներ էին: Բնությունը անջատել էր նրանց ծննդյան առաջին օրից, բայց արյունակցությունը պահում էր նրանց միևնույն հարկի տակ: Կար և մի ուրիշ, ավելի կարևոր բան, որ չէր թողնում նրանց բաժանվել իրարուց: Հայրական կտակը: Եթե բաժանվեին, պիտի զրկվեին ժառանգական իրավունքներից, և ժառանգությունը պիտի անցներ նրանց զավակներին:

Բայց նրանք իրարու չէին սիրում և երկուսի համար էլ անտանելի էր իրարու երեսը տեսնել ամեն օր: Պատճառը նրանց բնույթներն էին: Թադեոսը մեղմ էր, զգայուն, բարեսիրտ, նույնիսկ թուլամորթ: Գործերի մեջ նա երբեմն խաբվում էր և կորցնում: Ընդհակառակը, Մատթեոսը պաղարյուն էր, վերին աստիճանի հաշվագետ, կամակոր, ինչպես և խստապահանջ: Գործի մեջ միշտ աջողակ էր:

Մարդիկ ասում էին .

Թադեոսը լավ մարդ է, բայց խելոք չէ . Մատթեոսը ժլատ է, բայց խելոք է:

Եվ լավ մարդուն սիրում էին, խելոք մարդուն պատվում:Սակայն երկուսին էլ նախանձում էին, որովհետև հարուստ էին և քանի գնում ավելի ու ավելի էին հարստանում:

Մի երեկո, նրանք, նստած իրենց տան պատշգամբի վրա, խոսում էին գործերի մասին: Այդ օրը Թադեոսը մեկից խաբվել ու մի գումար էր կորցրել, իսկ Մատթեոսը մեկին խաբել էր և մի գումար վաստակել:

Դու հիմար ծնվել ես, հիմար էլ կգնաս գերեզման, ասաց Մատթեոսը ամենայն սառնասրտությամբ:

Ես չեմ կարող խաբել մարդկանց քեզ պես, ուրեմն ես պետք է խաբվեմ, արտասանեց Թադեոսը բարկացած: Կարելի էր կարծել, որ այս փոխադարձ վիրավորանքից հետո պատկառելի ծերունիները կհարձակվեն իրարու վրա և միմյանց կխեղդեն: Ամենևին: Թադեոսի բարկությունը վերջացավ մի լայն ժպիտով, որ սահեց նրա առողջ ու գեր դեմքով: Իսկ Մաթեոսի չոր ու ոսկրոտ դեմքի ոչ մի գիծը չշարժվեց: Փոխադարձ վիրավորանքները նրանց համար դարձել էին այնքան սովորական, որքան՝ ամենօրյա «բարի լույսն» ու «բարի երեկոն»:

Ավարտելով իրենց ասելիքը օրվա գործերի մասին, նրանք, ըստ սովորության, սկսեցին խոսել օրվա դեպքերի մասին:

Կարդացի՞ր այսօրվա լրագիրներում, ասաց Թադեոսը, թուրքերը գալիս են:

Շատ ուրախ եմ, որ գալիս են, արտասանեց Մատթեոսը:

Ուրա՞խ ես:

Այո, թող գան: նրանք մեզ կազատեն անիշխանակաների գալուց:

Բայց թուրքերը մեզ կկոտորեն, բարկացավ Թադեոսը:

Չեն կոտորի, արտասանեց Մատթեոսը ամենայն սառնասրտությամբ:

Կկոտորեն, սկսում եմ քեզ, ավելի բարկացավ Թադեոսը:

Չեն կոտորի, ասում եմ քեզ, ավելի սառնասիրտ արտասանեց Մատթեոսը:

Ումի՞ց կվախենան:

Գերմանացիներից:

Իսկ եթե չվախենա՞ն: Այն ժամանակ կկաշառենք նրանց գլխավորներին: Կաշառքով ամեն ինչ կարելի է անել:

Դու կարծու՞մ ես:

Ես համոզված եմ:

Սխալվում ես: Հայաստնում նրանց վրա կաշառքը չազդեց, այստեղ ել չի ազդի: Ո՛չ, նրանք մեզ կկոտորեն, ավելի լավ է, որ գան ու մեր երկրին տիրեն անիշխանականները:

Հիմար ես ծնվել ու հիմար ել գերեզման կգնաս, գոչեց Մատթեոսն այս անգամ բարկացած: Ես ատում եմ անիշխանականներին և զզվում նրանցից:

Ինչո՞ւ:

Որովհետև նրաք աստված չեն ճանաչում:

Այսինքն սեփականությո՞ւն, արտասանեց Թադեոսը ժպտալով:

Այո, սեփականություն: Այդ անօրենները կխլեն մեզանից մեր հարստությունը, մեր կայքերն ու գույքերը, ու մենք կմնանք չոր տափի վրա:

Թող մնանք, սոված չենք մնա, կապրենք մի կերպ:

Առանց սեփականության չենք կարող ապրել:

Միլիոն ու միլիոններ մարդիկ են ապրում առանց սեփական տների ու կայքերի, ինչո՞ւ մենք չենք կարող ապրել: Մատթեոս, ես միշտ քեզ ասել եմ և այսօր էլ կրկնում եմ. թող այդ փողապաշտությունդ գոնե այդ հասկանում, երբ մի ոտդ գերեզմանումն է: Ջավակներիդ կյանքն ավելի թանկ համարիր, քան հարստությունը:

Առանց հարստության նրանց կյանքը խնձորի կճեպին չարժե: Թող կորչեն քո անիշխանականները: Եթե լիներ իմ ձեռքում զորություն, կհրամայեի նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին այրել խարույկի վրա և նրանց մոխրով

կծածկեի փողոցների սալահատակը:

Ուրեմն, թող գա՞ն թուրքերը:

Թող գան, ես կկաշառեմ նրանց գլխավորներին:

Այդ դու, իսկ նրանք, որ կարողություն չունեն կաշառելու: Նրանք պիտի կոտորվե՞ն: Ես ի՞նչ գործ ունեմ ուրիշների հետ: Ամեն մարդ իր մասին է միայն պարտավոր հոգալ:

Քար մարդ ես, Մատթեոս, շատ չար ու քարասիրտ, արտասանեց Թադեոսը գրգռված և ոտքի ելավ:

Հիմար մարդ ես, Թադեոս, շատ հիմար ու տխմար, ասաց անտարբեր Մատթեոսն ու տեղից չշարժվեց:

Այդ պահին ներս մտավ Մատթեոսի կրտսեր որդին ու հաղորդեց.

Հայրիկ, անիշխանականներն արդեն մտել են քաղաք և կառավարությունը գրավել:

Մատթեոսը սոսկաց: Կամեցավ ինչ-որ ասել, չկարողացավ, փորձեց ոտքի ելնել, ոտքերը թուլացան, ընկավ ետ՝ բազկաթոռի վրա, արձակելով մի խուլ ճիչ:

Նա մեռավ սրտի պայթումից: